«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության մանկավարժական աշխատողների մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝

ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԵՐԵԽԱՅԻ ԵՐԱԺՇՏԱԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՃԱՇԱԿԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Կոտայքի մարզ ,Չարենցավան համայնք, Արզական գյուղի մսուր մանկապարտեզ ՀՈԱԿ-ի երաժշտության դաստիարակ

ՕՖԵԼՅԱ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------2

ԳԼՈՒԽ 1-ԻՆ----------4

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱ ԴԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ---------- **4**

ԳԼՈՒԽ 2 ----------9

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒՄԸ,ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ----------9

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ----------12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ----------15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ----------17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Երաժշտությունը մտքի հզոր աղբյուրն է :Առանց երաժշտական կրթության անհնար է ունենալ մտավոր զարգացում:

Վ. Սուխումլինսկի

Թեմայի արդիականությունը կայանում է նրանում,որ անհնար է պատկերացնել մեկին,որը անտարբեր լինի երաժշտության նկատմամբ,չհուզվի,չապրի նրանով

Երաժշտությունն ազդում է երեխայի մտքի,երևակայության, ստեղծագործական ունակությունների վրա,նպաստում նրա գեղագիտական դաստիարակությանը,բարոյական հատկությունների ձևավորմանը:

Նշված խնդիրները կարող են իրականացվել,եթե երեխաներին սովորեցնենք ամենավաղ հասակից լսել,ընկալել,հասկանալ,սիրել երաժշտությունը:

Ճիշտ է նկատել ռուս նշանավոր կոմպոզիտոր, մանկավարժ Դ.Բ. Կաբալևսկին. Երաժշտական կուլտուրայի զարգացման հետագա փորձը ,առանց նախնական լավ աշխատանքի և երեխաների երաժշտական դաստիարակության ,հավասարազոր է նրան,որ հսկա շենք կառուցեն առանց հիմքի:. Հետևաբար ,նախադպրոցական տարիքի երեխայի երաժշտական դաստիարակությունն ապահեվելու համար նախ և առաջ պետք է մտածել երաժշտության ունկնդրման միջոցով երաժշտական ընկալունակության մշակման ու զարգացման մասին. Դա կազմում է երաժշտական դաստիարակության հիմքը:

Մանկապարտեզի երեխաների դաստիարակության ծրագրում հատուկ տեղ է հատկացվում երաժշտության ունկնդրմանը:Երաժշտության ունկնդրումը նպաստում է երեխաների երաժշտական զգայունակության, ընկալունակության զարգազմանը,ընդլայնում երեխայի մտահորիզոնը,դաստիարակում երաժշտական կուլտուրայի տարրերը:Երաժշտության հաճախակի ունկնդրումը օգնում է երեխային ավելի մեծ տարիքում լավ հասկանալ,միշտ ընկալել ու սիրել երաժշտությունը:

Մեր ժամանակների մեծանուն կոմպոզիտոր Ա.Խաչատրյանը մի առիթով ասել է.,Սխալ է այն տեսակետը,թե 4-6 տարեկան երեխաներին պետք է մատուցել հատուկ երաժշտություն ,ավելի պարզ, տարրական ,գրված միայն նրա համար,ուրիշ՝ ,մեծահասակների երաժշտությունը իբրև մատչելի չէ և նույնիսկ «վնասակար»՝ նրանց համար:Ես այդպիսի կարծիքին դեմ եմ:

Չի կարելի երեխային արհեստականորեն անջատել դասական երաժշտությունից,միայն այն հիմնավորումով ,թե գրված է մեծահասկաների համար:Երեխան կարող է և պետք է լսի Չայկովսկու,Բորոդինի,Բեթհովենի ,Մոցարտի,Շտրաուսի ստեղծագործությունները.հարկավոր է ,որ նրա լսողությունը

ընտելանա իսկական լավ երաաժշտությանը,դաստիարակվի դասական օրինակներով»:

Երաժշտության ղեկավարը կոչված է մտերմացնել երեխաներին երաժշտությանը՝ներգործելով նրանց վրա արտահայտիչ կատարումներով,այնպես որ առաջացնի հուզական ապրումներ,բարերար աղդեցություն ունենա երեխայի հոգեկան աշխարհի վրա:Այդ իսկ պատճառով երաժշտության ղեկավարը պետք է հաճախակի զբաղվի իր տեսական և մասնագիտական մակարդակի բարձրացման,մանկավարժական վարպետության հարցերով:

ԳԼՈՒԽ 1-ԻՆ

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

1.1. Նախադպրոցականների գեղագիտական դաստիարակության խնդիրներն ու առանձնահատկությունները

Գեղագիտական դաստիարակությունը կարևոր տեղ ունի նախադպրոցականների դաստիարակության համակարգում, այն նպաստում է երեխայի հուզական ոլորտի զարգացմանն ու զգայական փորձի հարստացմանը, ակտիվացնում է իմացական գործունեությունը, բացահայտում ստեղծագործական կարողունակությունները և խթանում դրանց զարգացումը: Ճիշտ կազմակերպված գեղագիտական դաստիարակությունը ձևավորում է երեխաների

- գեղագիտական գիտակցությունը (տարրական գիտելիքներ արվեստի և գեղեցիկի մասին, գեղեցիկը ճանաչելու, նկատելու և գնահատելու կարողունակություններ, գեղեցիկի պահանջմունք և գեղագիտական ճաշակ),
- գեղագիտական,գեղարվեստական ընդունակություններն ու կարողունակությու նները (նկաչություն, ապլիկացիա, ծեփակերտում և այլն):

Այս կարողունակությունները կարևոր են համակողմանի զարգացած անձնավորության ձևավորման համար: Նախադպրոցական, հատկապես ավագ նախադպրոցական տարիքում երեխայի գեղագիտական դաստիարակության հիմնական նպատակը երեխաների գեղագիտական գիտակցության և ճաշակի ձևավորումն է:

Գեղագիտական դաստիարակության խնդիրները կարող ենք բաժանել երկու խմբի:

Առաջին խումբը նպաստում է երեխաների գեղագիտական գիտակցության ձևավորմանը, ինչը ներառում է

- գեղեցիկի, արվեստի մասին տարրական գիտելիքներ.

- գեղեցիկին կամ տգեղին հուզականորեն համարժեք արձագանքելու ունակություն.
- գեղեցիկը նկատելու և գնահատելու կարողունակություն.
- գեղեցիկը ճանաչելու պահանջմունք.
- գեղագիտական ճաշակ:

Երկրորդ խմբի խնդիրները նպաստում են գեղագիտական-գեղարվեստական ընդունակությունների զարգացմանն ու կարողունակությունների ձևավորմանը:

Այս տարիքում այդպիսի խնդիրներ կարող են լինել.

- նկարչական ունակությունների և կարողունակությունների ձևավորումը.
- ծեփակերտման ունակությունների և կարողունակությունների ձևավորումը.
- ապլիկացիայի ուսուցումը.
- կառուցողական (ճարտարապետա-շինարարական) ունակությունների և կարողունակությունների ձևավորումը.
- երաժշտական ընդունակությունների զարգացումը, երաժշտա-ռիթմիկ կարողունակությունների ձևավորումը,
- պարարվեստի տարրերի ձևավորումը,
- դեկորատիվ արվեստի տարրերի ձևավորումը,
- արտաքին և ներքին միջավայրի ձևավորման (դիզայնի) մասին ընդհանուր գաղափարների փոխանցումը,
- գեղարվեստա-խոսքային ընդունակությունների զարգացումը և արտահայտիչ խոսքի ձևավորումը:

1.2. Երեխայի գեղարվեստական, մասնավորապես՝ երաժշտական գործունեությունը և դրա կազմակերպման առանձնահատկությունները:

Երաժշտությունը մի յուրահատուկ լեզու է, որը շրջապատի համար մատչելի է դարձնում մարդու ներքին ապրումները, դարձնելով դրանք ,լսելիե: Երաժշտությունը որոշ ժամանակ տևող հնչյունների հիացմունք առաջացնող ամբողջություն է՝

ներդաշնակության մեջ: Դեռևս հին տրակտատներում նշվում է, որ երաժշտությունը տիեզերական ներդաշնակություն է: Մարդու կյանքում այն միշտ մեծ դեր է ունեցել: Կասկած չկա, որ երաժշտությունը մեծ ազդեցությունն ունի մարդու հոգեկանի վրա՝ առաջացնելով բազմազան հույզեր: Ձայնային տատանումները, ընկալվելով լսողական օրգանի միջոցով, փոխանցում են ինֆորմացիան դեպի ուղեղի համապատասխան մասեր: Տատանումներն անմիջականորեն ազդում են մարմնի և մեր կատարած գործունեության վրա: Երաժշտությունը հանգստացնող, երբեմն նաև բուժող միջոց է: Հայտնի է, որ օրգանիզմի վրա ուժեղ ազդեցություն ունի դասական և ժողովրդական երաժշտությունը:

Երաժշտությունը մշտապես օգտագործվել է երեխաներին հանգստացնելու, սփոփելու, զբաղեցնելու և կրթելու համար: Երեխաների կյանքում խոսքը, շարժումը, խաղը և երգը միասնական են: Համարվում է, որ երեխայի բնական խոսքն ու շարժումները պետք է դառնան երաժշտական փորձառության խթաններ, և որ երեխաները պետք է երաժշտության ստեղծման գործում մասնակիցներ դառնան:

Խմբերում ընդունված է ունենալ Երաժշտական կենտրոն, որի աշխատանքը նպաստում է երեխաների համակողմանի զարգացմանը: Նրա առավել ակնհայտ նշանակությունը կապված է հուզական զարգացման հետ: Յուրաքանչյուր մշակույթ ունի սիրո, փաղաքշանքի, ուրախության, խիզախության, տխրության երաժշտական դրսևորման իր ուրույն պարզունակ օրինակները, որոնք երեխաները հեշտորեն կարող են յուրացնել և դրանց միջոցով արտահայտել իրենց զգացմունքները:

Երաժշտությունը զորեղ միջոց է սոցիալական զարգացումը խթանելու համար:

Երեխաների խումբը կարող է համատեղ երգել կամ նվագակցել՝ մեծ հաճույք ստանալով այդ խմբային գործունեությունից: Հաճախ այն երեխաները, ովքեր դժկամությամբ են մասնակցում կամ ինքնարտահայտվում խմբային պարապմունքների ժամանակ, ավելի մեծ պատրաստակամությամբ են միանում երգին կամ պարին: Մանկական երգերից շատերը նախատեսում են զուգորդող շարժումների կատարում: Այս երգերը, որոնց ընթացքում երեխաները միաժամանակ կատարում են միևնույն շարժումները, հատկապես արդյունավետ են այլ հանգամանքներում պասիվություն դրսևորող երեխաներին աշխուժացնելու և ներգրավելու իմաստով:

Երաժշտությունը խթանում է նաև լեզվական ունակությունների զարգացումը:
Մարդկային խոսքին հատուկ է թե՛ ռիթմիկ և թե՛ մեղեդային կառուցվածքը: Սովորաբար երեխաները խաղում են բառերի հետ ռիթմի և մեղեդու տարրերի կիրառմամբ: Այս բնական խաղը մանկավարժի կողմից կարող է օգտագործվել երեխաների ուշադրությունը լեզվի հնչողության վրա դարձնելու համար: Օրինակ՝ նա կարող է օգնել երեխաներին սովորել խմբի մյուս երեխաների անունները՝ ցուցադրելով յուրաքանչյուր երեխայի անվան ռիթմը ծափերի կամ դափերին հարվածելու միջոցով:
Երաժշտությունը կարող է օգնել երեխաներին ընդլայնելու իրենց լեզվական կարողու նակությունները: Մեղեդին հղկում է հիշողությունը, հետևաբար երեխան կարող է հիշել երգի այն բառերը, որոնք իր բնական խոսքից մի փոքր բարդ են, այնուհետև օգտագործել դրանք նաև իր խոսքում: Երաժշտությունը զարգացնում է բառապաշարը: Մեծ է այնպիսի երգերի թիվը, որոնք պարունակում են թվարկումներ ու երևույթների անվանումներ, որոնց միջոցով երեխաների բառապաշարը կհամալրվի նոր բառերով: Երեխաները կարող են ծանոթ մեղեդիների օգտագործմամբ սեփական երգեր հորինել՝ պատմելով իրենց պատմություններն ու արտահայտելով անհատական զգացողությունները:
Երաժշտության միջոցով զարգանում են երեխաների շարժողական հմտությունները: Երաժշտական մատնախաղերը երեխային հնարավորություն են տալիս շարժելու մատներից յուրաքանչյուրն առանձին-առանձին՝ ի պատասխան որոշակի երգի, հետևաբար հղկում են աչքերի ու ձեռքերի կոորդինացիան: Պարզունակ ինքնաշեն գործիքները զարգացնում են նուրբ շարժողական հմտությունները, ինչպես դրանց պատրաստման, այնպես էլ նվագելու ընթացքում: Ինքնաբուխ պարերն ու երաժշտությանը համահունչ շարժումները ևս խթանում են շարժողական կոորդինացիան: Թեև երեխաների հորինած պարային շարժումները մեծապես նպաստում են նրանց զարգացմանը, տեղին է նաև ժողովրդական պարերի մի քանի հասարակ շարժումներ սովորեցնել նրանց խմբային ներկայացումների համար:

1.3. Երաժշտությունը մանկապարտեզում

Մանկապարտեզում երաժշտական դաստիարակության նպատակն է երեխաների մեջ ձևավորել հետաքրքրություն երաժշտության տարբեր ժանրերի նկատմամբ, զարգացնել երաժշտության ընկալումը, ձևավորել կատարողական ունակություններ, նպաստել ռիթմի ընկալմանը և երաժշտության տակ կատարվող ռիթմիկ շարժումների դրսևորմանը պարերում, երաժշտական խաղերում և այլ իմպրովիզացիոն իրավիճակներում: Երաժշտական դաստիարակությունը նպատակ ունի երեխաներին հաղորդակից դարձնել ազգային (հայկական ժողովրդական և ազգագրական երաժշտությանը) և համամարդկային երաժշտական մշակույթին, ինչպես նաև ծանոթացնել ազգային (դուդուկ, զուռնա, թառ, քամանչա, դհոլ, քանոն և այլն): Մանկապարտեզում երաժշտական դաստիարակության ուղղությամբ պետք է իրականացնել հետևյալ աշխատանքները.

1. Երաժշտության ունկնդրում – դաստիարակել հետաքրքրություն և հուզական վերաբերմունք տարբեր ժանրի երաժշտության նկատմամբ,
2. Երգեցողություն –զարգացնել երաժշտության ընկալումը, ծանոթ ստեղծագործություններն ըստ նախանվագի կամ մեղեդու հիշելու և տարբերելու կարողունակությունը, ճիշտ ձայնակազմավորումը, ձայներանգի մաքրությունը: Երեխաները ձեռք են բերում որոշակի պատկերացում երաժշտական հնչյունի բարձրության, տեմբրի, հնչյունի ուժգնության մասին, երգերում և երաժշտական խաղերում ձգտում են կերպարի արտահայտիչ կատարմանը (վերարտադրմանը):
3. Երաժշտառիթմիկ շարժում, պարեր, խաղեր-ձևավորել երեխաների կատարողական ունակությունները, երաժշտության տակ կատարվող ռիթմիկ շարժումների արտահայտչականությունը, պարերում և երաժշտական խաղերում իմպրովիզացիոն շարժումներ կատարելու կարողունակությունը[1]:

Հայ մեծագույն մանկավարժները ամենամեծ դպրոցը համարել են ժողովրդական դպրոցը և իրենց ստեղծած կրթական համակարգը փորձել են մոտեցնել ժողովրդական դպրոցին, որովհետև վերջինս առավելագույն արդյունքներին հասել է բնության թելադրած պարզագույն միջոցներով: Հայկական երաժշտական կրթության

ամենամեծ գիտակն ու ուսուցիչը Կոմիտասն է, որից սովորելը իրենց առաջնային պարտքն են համարում մեր երաժշտության երախտավորները, սակայն բոլորն էլ այդ օվկիանոսի մի չնչին մասն են միայն յուրացրել կամ ճանաչել: Մանկապարտեզում երաժշտական նյութը պետք է լինի անենալավն ու փորձվածը, այն, ինչը ստեղծվել է կյանքի մեջ՝ կյանքի գույներով, խաղերով: Դա, իհարկե, ազգային ստեղծագործությունն է՝ երգը, պարը, պարերգը, խաղերգը, ինչպես նաև խաղիկը, ասիկը: Միևնույն ժամանակ պետք է իմանանք՝ ինչպես մատուցել, որ մանկան հոգու մեջ թողնի այն հուզական երանգը, որով ստեղծվել է:

Զանազան խաղերի միջոցով պետք է անել այնպես, որ երեխան անդրադարձնի բնության ձայները՝ ծիտիկի ծլվլոցը, շնիկի հաչոցը, կատվի մլավոցը, գորտի կռկռոցը, և այլն: Այդ բնաձայնություններով կարելի է կատարել նաև ուսուցանվող երգը, մանավանդ, եթե սանը դեռ չի կարողանում պարզ խոսել, կարողանում է բնաձայնություններով երգել:

Երեխաները բնության և կենդանիների՝ իրենց իմացած ու սովորած ձայները մեծ հաճույքով ու ճոխությամբ կօգտագործեն իրենց խաղացած հեքիաթ-ներկայացումներում: Դաստիարակն ինքը պետք է իմանա և երեխաների հետ շփման ժամանակ օգտագործի և բնականորեն ուսուցանի մարդկային զանազան բացականչություններ:[1]

Դրանց ելևէջները և հնչերանգը գոյություն ունեն մեր երգերում, ուստի հարուստ և բազմազան բացականչությունների տիրապետող մարդը հաղթահարում է միօրինակ երգեցողությունը: Չէ՞ որ այդ բացականչությունները արտահայտում են զանզան զգացմունքներ, որոնք հարազատ են մայրենի լեզվին և ոգուն:

Մեծ օգուտ կարելի է ստանալ, եթե ստեղծվի հատուկ ձևավորված երաժշտական սենյակ: Սենյակում լինելու են զանազան տիպի նվագարաններ: Սենյակը հարկավոր է հնարավորին չափ այնպես կահավորել, որպեսզի նվագարանները ջարդելու ,հնարավորություններ քիչ լինի:

[1]Սոֆյա Գրիգորյան՝ Խաղը, շարժումը, հարվածային, շրխկան նվագարանները մանկապարտեզու/մ

ԳԼՈՒԽ 2

ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՈՒՆԿՆԴՐՈՒՄԸ,ՈՐՊԵՍ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՔ

Առավել հանգամանորեն ուզում եմ անդրադառնալ երաժշտության ունկնդրմանը,որն ընկած է երեխաների երաժշտական գործունեության բոլոր տեսակների հիմքում :Հնարավոր չէ երգել,պարել,նվագել,ստեղծագործել,եթե չես կարող ոնկնդրել,ճիշտ ընկալել երաժշտությունը:

«Երաժշտության իսկական ,ներզգայված և մտածված ընկալումը երաժշտության հետ հաղորդակցվելու ամենակտիվ ձևերից մեկն է,որովհետև այդ դեպքում ակտիվանում է աշակերտների ներքին ,հոգեկան աշխարհը,նրանց զգացմունքներն ու մտքերը : Ունկնդրումից դուրս երաժշտությունը որպես ավեստ գոյություն չունի :

[Դ.Բ Կաբալևսկի ,էջ 35]

Ունկնդրման միջոցով է երեխաների մեջ սեր առաջանում երաժշտության նկատմամբ,զարգանում երաժշտական ունակությունները ,մտածողությունը ,ձևավորվում գեղագիտական ճաշակը:

Ունկնդրման առաջնահերթ պայմաններից մեկը երեխային երաժշտությունը սկզբից մինչև վերջ ուշադիր ունկնդրել սովորեցնելն է,մասնավորապես,նախադպրոցական տարիքի երեխաներին,քանի որ նրանք չեն կարողանում երկար ժամանակ ուշադրությունը կենտրոնացված պահել:Այդ պատճառով էլ պարապմունքների ընթացքում անհրաժեշտ է կիրառել այնպիսի ձևեր և մեթոդներ,որոնք ակտիվություն ու հետաքրքրություն կմտցնեն երաժշտության ունկնդրման ժամանակ :Հաճախ մանկավարժին թվում է ,թե երեխան լուռ նստել է,նշանակում է ուշադիր լսում է երաժշտությունը:Բայց գործնականում ստացվում է ,որ նա ուղղակի հոգնել է,և ուշադրությունը ցրվել է:Կամ ուրախ բնույթի երաժշտության ունկնդրման ժամանակ երեխան ցուցաբերում է ավելի ակտիվություն,կատարում տեմպին և ռիթմին համապատասխան ավելորդ շարժումներ,որի հետևանքով ուշադրությունը չի կարողանում կենտրոնացնել ընկալելու երաժշտության հիմանական բնույթը,կերպարների բովանդակությունը:

Երաժշտության դաստիարակը պետք է կարողանա նման երեխաների գիտակցությանը հասցնել ,որ երաժշտությունը«արվեստի դաս է,երաժշտությունը օրինակ նկարից տարբերվում է նրանով ,որ նրա մեջ յուրաքանչյուր ակնթարթ ինչ-որ բան է կատարվում, ձայները կամ կրկնվում են ,կամ փոփոխվում,միանում են տարբեր մեղեդիների,որոնք բաղկացած են տարբեր,նման կամ հակադիր ֆրազներից»:

Պետք է երեխաներին սովորեցնել ոչ միայն լսել,այլև կարողանալ հետևել երաժշտական կերպարների զարգացմանը,հասկանալ երաժշտության բովանդակությունը,բնույթը,կառուցվածքը:Երաժշտության ունկնդրմից հետո պետք է երեխաներին հնարավորություն տալ ,որ նրանք լսածի մասին մտորեն,ընդհանրացնեն և ինքնուրույն արտահայտեն երաժշտությունից ստացած իրենց տպավորությունները: Երաժշտության ունկնդրման ժամանակ պետք է երեխաների ուշադրությունը կենտրոնացնել ստեղծագործության տեսակի(երգ,պար քայլերգ),տեմպի,զարկերի,ֆրազների,նվագակցության,մեղեդու հնչյունների շարժման ուղղության,տեմբրի բնույթի(հանդիսավոր ,նուրբ)և մյուս արտահայտչական միջոցների վրա:Պետք է սովորեցնել,որ երեխաները երաժշտության բնույթին համաձայն կատարեն ձեռքերի, մարմնի շարժումներ, քանի որ նման շարժումները ավելի հուզական են դարձնում երաժշտության ընկալումը:

Երաժշտության ունկնդրման միջոցով երեխաները հարստացնում են իրենց բառապաշարը երաժշտական հասկացություններով(քայլերգ,պար, երգ,կրկներգ,նախանվագ,վերջավորություն,նվագակցություն,մեղեդի,ժողովրդական երգ,բանաստեղծ,կոմպոզիտոր,դաշնամուր,ջութակ,սրինգ և այլն):

Երաժշտական ստեղծագործությունների գիտակցական և ակտիվ ընկալմանն ,երաժշտությանը և երեխաներին մասնակից դարձնում երաժշտության կատարմանը:

Նվագարաննրի միջոցով երեխաները ավելի լավ են հասկանում երաժշտության ոչ միայն բնույթը,բովանդակությունը,այլև կառուցվածքը:Այսպես օրինակ,երբ բուն երգը երեխաները նվակգակցում են ծափերով,իսկ կրկներգը թմբուկի հարվածով, դրանով շեշտվում է ստեղծագործության երկմաս կառուցվածքը:

Կարևոր է,որ երեխաներն իրենց ռիթմիկական կամ մեղեդային նվագակցությունը միաձուլեն հնչող երաժշտությանը:

Ունկնդրման ժամանակ կարելի է ցույց տալ երաժշտության բնույթին համապատասխան գեղարվեստական նկարներ,կապ ստեղծել արվեստի մյուս տեսակների հետ:

Երաժշտությունից ստացած տպավորությունների ինքնաարտահայտման ձևերից մեկն էլ նկարելն է:Երեխաներն իրենց զգացմունքը վերարտադրում են գույների տարբեր երանգներ ստեղծելու միջոցով:

Ունկնդրման համար նախատեսված երաժշտության մի մասը կատարում է երաժշտության դաստիարակը(երգում ,նվագում),իսկ մյուս մասը երեխաները լսում են ձայնասկավառակներով,տեսահոլովակներով(երգչախմբեր,նվագախմբեր և այլն):

Երեխաների երաժշտական դաստիարակությունը և գեղագիտական ճաշակի ձևավորումը անմիջական կապի մեջ են ունկնդրվող երաժշտական ստեղծագործությունների գեղարվեստական արժեքի և մանկավարժական նպատակաուղղվածության հետ:

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտական աշխատանքը իրականացվել է ,Արզականի մսուր մանկապարտեզե ՀՈԱԿ-ի միջին խմբում:

Երաժշտության պարապմունք

Թեման՝ ունկնդրել և ուսուցանել ,Կաքավիկ երգը:

Խորացնել «Պար դափերով» պարը:

Խաղալ՝ «Ուժե՞ղ, թե՞ մեղմ» խաղը:

Նպատակը՝

- ✓ **Հետաքրքրություն առաջացնել ժողովրդական երգի նկատմամբ:**
- ✓ Սովորեցնել ճիշտ երգել ,Կաքավիկե երգը, մաքուր վերարտադրել երգի մեղեդին:
- ✓ Կրկնել երգը, ամրապնդել երգի արտահայտիչ և ուրախ կատարման հմտությունը, տարբերել երգերի արագությունը:
- ✓ Նպաստել ստեղծագործությունը սկզբից մինչև վերջ ունկնդրելու կարողունակության դրսևորմանը:
- ✓ Կարողանալ տարբերել ստեղծագործության սկիզբը,ավարտը,մասերը:

- ✓ Սովորեցնել պարել ռիթմիկ, ճիշտ կատարել հարվածները դափին:
- ✓ Խորացնել երեխաների ստեղծագործական կարողունակությունները:

Պարապմունքի ընթացքը

Երեխաները դահլիճ են մտնում և նստում են աթոռակներին: Կատարել երգը՝ հիշեցնելու նպատակով:

Որոշել երգի բնույթն ու տրամադրությունը, կատարել ձայնային վարժություններ և անցնել երգի ուսուցմանը:

Ունկնդրման ընթացքում ցուցադրել համապատասխան նկարներ,միաժամանակ երեխաներին ,հիշեցնել հայ մեծանուն կոմպոզիտորի՝Կոմիտասի մասին,ցուցադրելով նկարը,հանելուկ առաջարկել կաքավիկի մասին:

Երգը ուսուցանել՝ յուրաքնչյուր տողին համապատասխան շարժումներով ,միաժամանակ ցուցադրելով նկարը:

Երգը կատարում են 3 անգամ:

Երեխաները կանգնում են և կատարում են երաժշտա-շարժական վարժություններ՝ քայլքի տեսակներ, շարափոխումներ, պարային քայլեր և պարային տարրեր:

Անցնել պարի խորացմանը, հետևել շրջանի համաչափությանը, ռիթմիկ կատարմանը:

Խաղալ՝ ,Ուժե՞ղ, թե՞ մեղմե խաղը:

Խաղի նպատակը՝

Երեխաներին վարժեցնել՝ տարբերելու ուժեղ և մեղմ հնչողությունը:

Խաղի պարագաները՝

Որևէ նվագարան պատկերող մեծ և փոքր քարտեր:

Խաղի ընթացքը.

Խաղին մասնակցում են բոլորը: Ընտրվում է խաղավար, որն առաջարկում է կատարել որևէ երգ և ունկնդրել մանկական նվագարանի նվագակցության ուժեղ և մեղմ հնչողությունը: Ուժեղ հնչողության դեպքում երեխաները բարձրացնում են մեծ նվագարան պատկերող քարտը, մեղմ հնչողության դեպքում՝ փոքրը:

ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ

ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԵՆ

- ✓ Ընկալել,
- ✓ Մտապահել,
- ✓ Հուզականորեն արձագանքել ստեղծագործությանը
- ✓ Ճանաչել և հետաքրքրություն ցուցաբերել ժողովրդական ստեղծագործությունների նկատմամբ:
- ✓ Հասկանալ ստեղծագործության սկիզբը,ավարտը և մասերը:

ԾԱՓԵՐ ՄԵՂՄԻՑ ՈՒԺԵՂ,ՈՒԺԵՂԻՑ ՄԵՂՄ

Երաժշտության դաստիարակը երեխաներին առաջարկում է ծափահարել: Ձեռքերի շարժումով ցույց է տալիս, որ ծափահարեն մեղմ: Հետզհետե, ձեռքերը բարձրացնելով վեր և ափերը բացելով, ցույց է տալիս, որ ծափերը ուժեղացնեն: Այսպես, փոխելով ձեռքերի դիրքը և դեմքի արտահայտությունը, նա մեկ՝ ուժեղացնում, մեկ՝ մեղմացնում է ծափերը: Այսպես, երեխաները կատարում են՝ ուժեղ, մեղմ, մեղմից՝ ուժեղ, ուժեղից՝ մեղմ, միևնույն ժամանակ ծանոթանում խմբավարի շարժումներին: Նույնը կատարում են ոտքերի դոփյունով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գրծնական աշխատանքի արդյունքում եկանք մի շարք եզրահանգումների.

- Երեխայի գեղարվեստական գործունեության մեջ էական տեղ ունի երաժշտական դաստիարակությունը, իսկ երաժշտական մշակույթի ձևավորման գործում կարևոր տեղ են գրավում երգերը, խաղերգերը, երաժշտական խաղերը, պարերգերը:

- Մանկապարտեզում երաժշտական դաստիարակության նպատակն է երեխաների մեջ ձևավորել հետաքրքրություն երաժշտության տարբեր ժանրերի նկատմամբ, զարգացնել երաժշտության ընկալումը, ձևավորել կատարողական ունակություններ, հաղորդակից դարձնել և համամարդկային երաժշտական մշակույթին, ինչպես նաև ծանոթացնել ազգային նվագարաններին
- Նախադպրոցական տարիքում նպատակահարմար է երաժշտական դաստիարակությունն իրականացնել ազգային երաժշտության միջոցով, ուստի այստեղ երաժշտական նյութը պետք է լինի անենալավն ու փորձվածը: Դա, իհարկե, ազգային ստեղծագործությունն է՝ երգը, պարը, պարերգը, խաղերգը, ինչպես նաև խաղիկը:
- Սանը, քայլ առ քայլ, անկաշկանդ միջավայրում, ամենօրյա արդյունավետ գործունեությամբ, լիիրավ մասնակցությամբ, կարողունակություններ և հմտություններ ձեռք բերելով՝ յուրացնում է
- Մեր փորձարկման արդյունքում համոզվեցինք, որ երաժշտական գործունեությունը նպաստում է երեխաների գեղագիտական ճաշակի զարգացմանը:
- տարբեր կարողունակությունների դրսևորմանը, հղկմանը, մի շարք նոր հմտությունների ձեռքբերմանը (լեզվական, թատերական),
- խոսքի զարգացմանը, բառապաշարի հարստացմանը,
- մտածողության ձևավորմանը, ստեղծագործական երևակայության զարգացմանը, գեղարվեստական ճաշակի զարգացմանը,
- ինքնադրսևորմանը, բարդույթներից ձերբազատմանը,
- ինքնուրույն աշխատելու ունակության ձևավորմանը,

- բավարարվում է նրա ինքնահաստատման – ինքնադրսևորման պահանջը,
- ձեռք է բերվում խմբով աշխատելու, ինքնակազմակերպման հմտություններ,
- ավելի մոտիկից ճանաչելու իրենց դաստիարակներին, տատիկներին, պապիկներին, ծնողներին, հարազատներին:

Սաները գիտելիքներ ձեռք բերեցին, իմացան՝

- հայկական ժողովրդական երգերը,

Կարողացան՝

- երգել հայկական ժողովրդական երգեր ,
- ծանոթացան հայ անվանի կոմպոզիտորներին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Նախադպրոցական կրթական միջին խմբի հիմնական ծրագիր-Երևան 2023
2. Մարինե Մկրտչյան՝ ,Երաժշտության ունկնդրումը մանկապարտեզում և կրտս եր դպրոցումե
3. Մանկապարտեզում երաժշտության ծրագրի մեթոդական մշակում
4. Շուշանիկ Մկրտչյան,Երաժշտությունը մանկապարտեեզումե
5. Յու.Վ. Յուզբաշյան ,Ա.Շ. Մկրտչյան,Երաժշտությունը առաջին դասարանումե-Երևան 1982
6. Է.Ա.Ալեքսանդրյան,Նախադպրոցական մանակավարժությունե